

ամբողջ ընթացքին չեն կորանար դէպի դե-
տին ու ճիճիի նման չեն սողոսկիր դար-
չապարնուն վրայ, այլ իրենց հրեշտակա-
նման կառուցուածքը աննկուն պահելով,
«Վերամբարձ բազուկներով վերասլաց» կը
սաւառնին դէպի մարդկային խոհանրու-
բարձունքները ու կը լուսաւորեն մարդ-
կութիւնը «իրենց մարմնոյն աշտանակին
վրայ զետեղուած բաղմաբերանեան ճրա-
գովը»:

Կէս աստուածներ են, աւելի ճիշդը՝ ի-
րական «աստուած կոչեցեալներ», ու կը
նմանին Աստուծոյ այն չափով «որքան որ
հնար է Աստուծոյ մարդը նմանի Աստու-
ծոյ»:

Մեր անդուգական քնարերգուն յաջո-
ղած է բացառիկ ճարտարութեամբ քան-
դակել սուրբին իսկական տիպարը, կ'ար-
ժէ որ անոր պերճատեսիլ վեհութիւնը
լիովին ըմբռնենք:

«Երջանիկ ու փառաւոր են սուրբերու պարերն,
Որոնցմէ ունեւ դոյզն ինչ սահեցան, բայց յաճախագոյնըս հաստատուեցան.
Փոքր ինչ սարսեցան, բայց սաստիկ վառուած Հոգւոյն նշոյլներով՝
Մաքրութեան ու լուսաւորութեան:
Գայթուսն անոնց՝ ցոյց կու տայ մարմնին տկարութիւնը հասարակըստեղծ,
Եւ կանգնումն անոնց՝ բնական օրէնքը գերազանցող
Վարքն առաքինի եւ հրեշտակային:
Ուստի անոնք, որ Քրիստոսի հօր
Ամենիշխան եւ աստուծային բերնովն են օրհնուած,
Եւ ընտրուածներ են, հուշակուած, խնկուած ու բարեբանուած,
Իբրեւ Քրիստոսի անդամներ պաշտուած,
Եւ իբրեւ Սուրբ Հոգւոյն օրհաններ են պատրաստուած, —
Զունին իրենց մէջ խաւարի հետքեր եւ կամ նշմարներ,
Այլ բացարձակ անկեղծութիւն եւ լուսաւոր արդարութիւն են,
Նըմանութիւնը կրելով Աստուծոյ,
Որքան հեար է որ Աստուծոյ մարդը նմանի Աստուծոյ:
Պարզեք եւ նակատաբաց, վարմունքով բարձր անխոնարհի.
Իրենց կեանքն ըզգաստ է եւ անըստգիտ,
Աստուածպաշտութիւնն՝ ամուր անփոփոխ,
Ընթացքն արի եւ անկասելի,
Ճշմարտութիւնն է միատեսակ անըստերիւր,
Դիմագրաւութիւնն է գօրեղ եւ անպարտելի,
Տեսութիւնն է պայծառ, անշրփոք,
Իմաստութեան սէրն է երկնային եւ անկոյսելի,
Պատկերն է մաքուր, անաղարտելի »:

— Բան ՀԱ. —

Մարդկային ճակատագրին մոռալ հա-
մայնապատկերին ծոցէն, լուսաւոր կոթո-
ղի մը նման վեր ցցուող սուրբերու այս
հոգեպարար տեսիլքին ձգած տպաւորու-
թիւնովը կ'ուզենք վերջացնել Նարեկի ան-

դաստաններուն մէջ մեր կատարած պըր-
պըտումները:

(Շարունակելի)

ՏՊԹ. Պ. ՄԻՍԱԳԵԱՆ

ՄԱՆԻՇԱԿՆԵՐՈՒ ՀՈՎՏԻՆ ՄԷՋ

Զարմուհիս՝ Գարչուհի Անթառամանին
սրտայոյզ յիշատակին

Մանիշակներու հովտին մէջ դաւար՝
Դեռ մանուկ՝ աչքերս հիացմամբ խնդուն՝
Կը թռչնէի... վերէն կը շողար
Արեւն հուրհուրան մայիսով լեցուն:

— Հոտաւէտ հովտին, ահ, հեռու մընաց,
Բայց բոյրն հոգեոյս մէջ խլտացաւ անդարձ...:

Գիւղէն՝ երջանիկ խնդուքի նըման
Կը հնչէր զանգակն ըսպիտակ մատրան,
Ու զօղանջն իր գիւղ՝ զոգով անսահման՝
Կը շոյէր զաշտն ու հոգիս մանկական...:

— Զանգակատունն հայ աւերակ է արդ,
Բայց դեռ կը լըսեմ իր աղօթքն արծաթ:

Զանգը գաղտնիքներ կը ցանէր օդին,
Յոյզեր անծանօթ, իմաստներ թաքուն.
Կը փսփըսային ծաղիկներ չորս դին
Մինչ հովին թեւով կը շրջէր գարնուն...:

— Դեռ յոյզեր գաղտնի կը խօսին ինձ հետ,
Բայց գարունն անհոգ հեռացաւ յաւէտ:

Ծառ մը երազի նըման գեղեցիկ
Կը կախէր իր շուքն արահետն ի վար,
Որուն ցօղաթուրմ ճիւղէն՝ եկեղանիկ
Մ'իր սրինգն աղու նօթ առ նօթ կու լար:

— Կապոյտ ըստուերով ծառն այնտեղ է միշտ,
Ահ, ուր է թռչնիկն իր երգով դիւթիչ...:

Ու կը հնձէի ծառաւով մ'անյագ՝
Բուրաւէտ մարգին ծոցին մէջ կանանչ՝
ժպտուն աչքի պէս կապոյտ մանիշակ՝
Երջանկութեան իբր հայելի, ճաճանչ...:

